ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ — РЕЦЕНЗИИ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հովհ. Պետրոսյանի կազմած 3 հատորանոց «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիայի» մասին գրվեցին մի շարք գրախոսականներ, որոնցից ամենից ավելի հմտալիցը բուլղարահայ Ներսես Գասապյանինն էր (տպագրված «Պատմա-բանասիրական հանդես»-ի 1961 թ. N 3—4-ում)։ Ն. Գասապյանը հարուստ փաստերով ցույց տալով «Բիբլիոգրաֆիայի» մեջ եղած թերություններն ու անճշտությունները, միաժամանակ ներկայացրեց մի մեծ ցուցակ այն պարբերականների, որոնք պակասում էին Պետրոսյանի գրքում։ Մենք այստեղ տալիս ենք ճշտումներ առանձնապես եգիպտահայ մամուլի վերաբերյալ և «Բիբլիոգրաֆիայից» ու Ն. Գասապյանի ցուցակից դուրս մնացած պարբերականների լրացուցիչ ցուցակ, ցանկանալով օգնել հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիայի ապագա աշխատանքներին։

Ա. ՃՇՏՈՒՄՆԵՐ

II հատ., էջ 516, Աշխատանք, Գահիրե, 1944—1946, Ճշտել. շարունակվել է նաև 1947 թ. (4-րդ հատոր), հիմնադիր խմբագիրներ՝ Խ. Հովհաննեսյան և Մ. Պեյլերյան։

II հատ., էջ 270, Եգիպտահայ տարեցույցը. Սուրեն Պարթևյանինը, որը Պետրոսյանը չի հիշատակել և կամ նույնությամբ Գ. Լևոնյանի սխալը կրկնելով՝ խառնել է Լ. Աճեմյանի՝ հակումներով և բովանդակությամբ բոլորովին տարբեր՝ եգիպտահայ տարեցույցի հետ (1925՝ Ա տարի, 1926՝ Բ տարի, թվերի հետ)։ Սուրեն Պարթևյանի կազմածների մասին հիշատակում է Ն. Գասապյանը, բայց նշում է 1914 թ. միայն։ Փաստորեն լույս է տեսել նաև 1915 և 1916 թթ.՝ Գահիրե, տպ. Զարեհ Պերպերյան, վերնագրից առաջ կրելով Annuaire des Armeniens d'Egypte և կամ Almanach Armeno-Egyptien, Ա տարի, 280 էջ, Բ տարի, 176 էջ, Գ տարի, 206 էջ։ Հավանարար լույս է տեսել նաև 1917 և 1918 թթ.։

II հատ., էջ 499—500, Զարբոնք, գիրք-հիշատակարան նախկին որբերու, որտեղ հիշատակում է, թե հրատարակվել են Ա դրբի 3 պրակները միայն։ Ճիշտը և լրիվը՝ լույս է տեսել հետևյալ ձևով. Գիրք Ա, 1939, թիվ 1—5, գիրք Բ, 1940, թիվ 6—10, ամբողջ էջերի գումարը՝ 124։

II հատ., էջ 516—520. Կյանք և գիր. գիրք-հիշատակարան հայ երիտասարդության (ամսագիր), Գահիրե, 1944—1948։ Գ հատորը, որ սկսել է հրատարակվել 1948 թ. սկզբից, հրատարակչի հայրենադարձության պատճառով 4-րդ պրակից սկսել են հրատարակել Վ. Գարտաշյանը և Ս. Պալբքճյանը, որոնք շարունակել են լույս ընծայել նաև Դ հատորը մինչև 1949 թ., տպ. Նուպար, Նոր Աստղ և Արամ Պերպերյան տպարաններում։

Կյանք և գիր. տարեգիրք, Գահիրե, 1948 թ., որից բազմաթիվ օրինակներ են հասել Հայաստան, Պետրոսյանը ոչինչ չի հիշատակում, իսկ Գասապյանի հիշատակածի վրա պետք է ավելացնել հետևյալը. հրատարակիչներ՝ Ա. Ալպոյաճյան և Դ. Շահլամյան, կազմ. Հ. Ժամկոչյան, գեղվ. ձև.՝ Ա. Շալճյան, լույս է տեսել Ա տարին միայն։

Հիշատակարան-տարեգիրք. Վ. Զարդարյանի։ Նույնպես Պետրոսյանը չի նշում, իսկ Գասապյանը հիշատակում է միայն 1937—38 ...? (երկու հատոր)։ Ճշտել. Հիշատակարան տարեգիրք, Հայկ. տպագրության 400-ամյա հոբելյանին առթիվ (1512—1912), Կ. Պոլիս, 1910—12, 3 հատորով, 442 էջ։

Հիշատակարան-տարեգիրք. Վ. Զ-ի, վարձատրված 1912 թ. Սահակ-Մեսրոպյան մրցանակով, Գահիրե, տպ. Հ. Փափազյան, 1912—1933, Ա—Ե պրակ, և 1933—1939։

Հիշատակարան-տարեգիրք. Վ. Զ-ի, 1941 տարվա, նոր շրջան, Գահիրե, 1512—1940, Ա մաս, 64 էջ, 1941, Բ մաս, 65—112 էջ, նաև՝ 1942, Բ տարի, պրակ 1, 93 էջ։ Իսկ 1910 թ. լույս է տեսել լոկ Հիշատակարան անունով, պրակ առ պրակ։

Սարկավագին (Հարություն Մանավյան) տարեցույցը հիշատակված է միայն 1914—1918. 1921, Կ. Պոլիս, իսկ ցուցակում նշված է Գահիրե։ Փաստորեն պետք է լինի. Եգիպտահայ տարեցույց, Ալեքսանդրիա, տպ. Ա. Ստեփանյան, 1912, 207 էջ, նույնը նույն տեղ, տպ. Գասապյան, 1918, Ե տարի, 160 էջ։

Սարկավագին տարեցույցը. Կ. Պոլիս. տպ. Մանվելյան, 1920, 142 էջ, 1921, 144 էջ։

Սարկավագին տարեցույցը. Ալեքսանդրիա, տպ. Ա. Ստեփանյան, 1928 (15-րդ տարի), 107 էջ, 1930, 175 էջ։ Նույնը, նույն տեղը, տպ. Ա. Գասապյան, 1931, 221 էջ, նույնը, նույն տեղ. տպ. Ա. Ստեփանյան, 1932 (19-րդ տարի), 207 էջ, 1933, 180 էջ։

Սարկավագին Եգիպտահայ տարեցույցը. Ալեքսանդրիա, տպ. Ա. Ստեփանյան, 1934, 142 էջ, 1935 (22-րդ տարի), 162 էջ, 1936, 121 էջ, 1937, 152 էջ, 1938, 146 էջ, 1939, 122 էջ, 1940, 114 էջ, 1941 (28-րդ տարի), 116 էջ, 1942, 96 էջ։ Նաև՝ 1943 (30-րդ տարի), 118 էջ, 1944, 84 էջ, 1945, 96 էջ, 1946, 129 էջ, 1947, 124 էջ, 1948, 141 էջ, նույնը՝ Գահիրե, տպ. Հարեթ, 1949 (36-րդ տարի), 124 էջ, 1951 (38-րդ տարի), 108 էջ։

Հրեղեն սյուն, II հատ., էջ 425—426, 1927—32, Գահիրե. ճշտել. սույնը շարունակվել է մինչև 1933 թ., յոթ տարվա ընդմիջումից հետո սկսել է լույս տեսնել 1940 թ., որպես ամսագիր հոգևոր գրականության, Բ շրջան, 8 էջ, տպ. Սահակ-Մեսրոպ։

Միությունն, էջ 246, պետք է լինի՝ Ամսօրյա պաշտոնաթերթ հայկական բարեգործական ընդհանուր Միության, Կահիրե, 1912—1928, տպ. ՀԲԸՄ, Փարիզ, 1929—1938, տպ. Artistigue Խ. Սաթիկյանի։

Ոֆինոս, հատ. II, էջ 403, Աղեքսանդրիա, 1925—1927, արտոնատեր՝ Հ. Արսլանյան։ Ճշտել. Արամ Ստեփանյանի խմբագրությամբ 1925—1926 թթ. վերոհիշյալ քաղաքում լույս տեսնելուց հետո՝ այս անգամ Հարություն Ասլանյանի խմբագրությամբ լույս է տեսնում նաև Կահիրեում 1928 թ.։

Սարժում. Կահիրե, 1911. Մեղ մոռ դեսեռ՝ Շաբաթուս, Հայ երիտասարդին դիրքը, հրատ. Կ. Հ. Ռ. Մ-ի, Կահիրե, 1947, տպ. Նուպար։

Իսկ Ն. Գասապյանի մոտ հիշատակված են. Բացուցակ նոր հրատարակությանց, Վ. Ջ.-ի, ամսաթերթ, Կ. Պոլիս, 1893—95։

Ավելացնել՝ նույնը նաև Կահիրե և 1924—25, 3 թիվ միայն։ 1923, հունիս ամիս, 16 էջ։

Ամսօրյա Տեղեկագիր, Հ. Բ. Ը. Մ.-ի Եգիպտոսի շրջանակին, Կահիրե, 1938—39։ Ճշտել. 1938՝ Ա տարի, 1939՝ Բ տարի, 1940՝ Գ տարի, 1941՝ Դ տարի, 1942՝ Ե տարի, տպ. Սահակ Մեսրոպ, 16 էջ։

Անդաստան հայ մտքի, պարբերաթերթ, Կահիրե, ճշտել. լույս է տեսել 1945, 1946, 1947 թվականներին էլ, Կազմ. հրատարակիչ՝ Հայկ. Ժամկոչյան։

Մյուս կողմից՝ Հ. Պետրոսյանի մոտ կան մի քանի տասնյակ կրկնություններ, որոնցից հիշատակենք եգիպտահայ թերթերից՝ Արշալույս, Կահիրե, 1899—1914 (Ա հատ., էջ 709) և 1910—1914 (Բ հատ., էջ 169)։ Հայ դպրոց, Կահիրե, Բ հատ., էջ 462 և 497, որ նույն ամսագիրն է. նաև՝ Նոր արվեստ և մշակույթ (հատ. Բ, էջ 426 և 529), Կահիրե, 1927 և 1946՝ նույնանուն պարբերականն է, որ 1927 թ. երբեք չէր կարող հրատարակված լինել, քանի որ երա գույգ հրատարակիչները՝ Ս. Պալայանը և Պ. Սիմոնյանը մանկահասակներ էին[1]։

Իր գործի II հատորի 195-րդ էջում Պետրոսյանը Պոնտոսում լույս տեսած Փեքակի մասին ասում է, որ այն լույս է տեսել Տրապիզոնում, իսկ առաջաբանում նշվում է, որ այն լույս է տեսել Կիրասոնում։ Կարապետյանը և Էնոնյանը գրում են, որ Փեքակը հրատարակվել է միայն Կիրասոնում։ Ճիշտն այն է, որ Փեքակը եղել է Կիրասոն քաղաքի ամսաթերթը, բայց մինչև այդ, տեղում տպարան չլինելու պատճառով, թերթը տպագրվել է Տրապիզոնում «Մեշվելք» և «Ոսկինարա» տպարաններում, իսկ հետագայում միայն շարունակվել է լույս տեսնել Կիրասոնում Փեքակ անունով, իր իսկ սեփական տպարանում, որտեղ հրատարակվել են նաև «Զգիտականություն» և այլ անուններով գրքեր։

Խմորատիպ պարբերականներ հիշատակելիս Պետրոսյանը չի տվել շատերի ճիշտ պատկերը, օրինակ. իր II գրքի Առաջաբանում (էջ 7—9) գավառի մամուլի մասին խոսելիս, մասնավորապես Տրապիզոնում հրատարակված պարբերականները 8-ից իջեցնում է 4-ի, իսկ ճիշտ հակառակն է վարվում Վանում և այլ վայրերում լույս տեսած մամուլի հետ։

Հ. Պետրոսյանի ցուցակում նշվել են բազմաթիվ խմորատիպ-մեքենագիր պարբերականներ, սակայն, այդտեղից դուրս են թողնվել Առաջաբանում հիշատակված տասնյակ ուրիշներ, որոնց մասին ճիշտ դիտողություններ տվել է Ն. Գասապյանը։ Ավելացնենք մի քանի վրի-

---

1 Այս կրկնությունների շարքում արժե հիշատակել նաև հետևյալները, որոնք դուրս են մնացել Գասապյանի նշածներից. Հայն Հայրենյաց, Ա հատ., էջ 713, 1899, Նյու-Յորք, և Բ հատ., էջ 133, 1909, Կ. Պոլիս, Մոծակ, Բ հատ., էջ 185, 1910, Տրապիզոն և էջ 331, 1919, Զմյուռնիա, Պահակ, Պոստոն, Բ հատ., էջ 233՝ 1911 և էջ 365՝ 1921, Հայ Աշխարհ, Կ. Պոլիս, Բ հատ., էջ 163՝ 1909—14 և էջ 323՝ 1919, իսկ Ազատ խոսք (Azad Khosk), Փարիզ, Աղեքսանդրիա, 1901—1908 (Բ հատ., էջ 8) պարբերականը նշված է նաև հայ և օտար լեզվով մամուլի ցուցակներում։

պումներ ևս. Լարիր, Աղեքսանդրիա, 1903, Լուսին, Կահիրե, 1909, Ակրյուր, Հալեպ, 1913։

Հովհաննես Պետրոսյանի կազմած բիբլիոգրաֆիայում մեկ տնվան տակ միացվել են նույնանուն, բայց բոլորովին տարբեր պարբերականներ. մասնավորապես պոլսահայ տասիկ, Մասիս պարբերականներու Իսկ Զայն Հայրենյաց, Մոծակ և այլ պարբերականները, որոնցից առաջինը լույս է տեսել Նյու-Յորքում և Կ. Պոլսում, իսկ երկրորդը՝ Տրապիզոնում և Իզմիրում, կրկնված են տարբեր էջերում իբրև առանձին պարբերականներ, մինչդեռ դրանք նույնն են թե՛ իրենց բովանդակությամբ և թե՛ հրատարակիչ-խմբագիրներով[2]։

Ստորև դրված բիբլիոգրաֆիական ցանկում ընդգրկված են նաև մի քանի տեղեկագրեր և ժողովածուներ, որոնք թերևս չպետք է տեղ գտնեին ցուցակում, բայց քանի որ Պետրոսյանն ու Գասապյանն էլ այդպիսիները ընդգրկել են իրենց աշխատություններում, մենք էլ նույնը արեցինք, մտածելով, որ նրանցից մի քանիսը, չնայած իրենց տարբեր բնույթին, արժանի են տեղ գրավելու մյուս պարբերականների կողքին[3]։

Բ. ՅՈՒՑԱԿ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ՉԵՆ ՀԻՇՎԱԾ Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՅՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ։

1. Աստ Կիպրահայ, գրական և երգիծաբանական անկախ շաբաթաթերթ, 1921—1922, Նիկոսիա, հրտ. Ա. Արսլանյան։

2. Ազգակ մարզական, շաբաթաթերթ. Բեյրութ. Ա տարի, 1952։

3. Արենահայ բնութենապաշտներու միություն. մեր թերթիկը, Աթենք, 1947։

4. Ալիք, շաբաթաթերթ, Շտութկարտ, 1948—1949։

5. Ամերիկա, համայնագիտական միամսյա հանդես, Բոստոն, 1911, Ա տարի։

6. Ամսօրյակ, պարբերաթերթ դպրության և արվեստի, Փարիզ, խմբ. կազմ. Հ. Չարդարյան, Զ. Մ. Որրունի և Գ. Ծիզմենյան։ 1957—58։

7. Անցած դարձածներ, պարբերաթերթ, Կահիրե, 1911—1912, հրատ. Երվ. Քերեստեճյան։

8. Անուշապուր-Պատկեր, շաբաթաթերթ. Իսթանպուլ (1927 թ. փետր. 24-ից, «Անուշապուրա»-ի 11-րդ և «Պատկերա»-ի 9-րդ համարների միացումով)։

9. Աշխատանք, քաղաքական, հասարակական և գրական օրաթերթ, Թեհրան, խմբ. կոլեգիա, տպ. Գարուն, 1946, Ա տարի։

10. Ապտակ, ազգային, գրական և երգիծական շաբաթաթերթ, Սոֆիա, Ա տարի, 1925, խմբ. Արամ Դուրրեթյան, տպ. Եփրատ, լույս տեսած է 4 թիվ միայն։

11. Ասզարեզ, ժողովածու նվիրված պարբերականի տասնամյակին (1909—1918), Քալիֆորնիա, 1918, 322 էջ։ Նաև հիսնամյակի առթիվ (1908—1958 թթ.). Ֆրեզնո-Քալիֆորնիա, 1958, տպ. Ասպարեզի, 402 էջ։

12. Արարատ, օրաթերթ, օրկան հայ Ռամկ. Ազատկ. կուսակցության, Աթենք, 1925։

13. Արեգ, գրական-պատմական պատկերազարդ հավելված Արեգ օրաթերթի, Բաքու, 1915, թ. 1։

14. Արձագանք, պարբերական, Կիպրոս, 1957—59, Հ. Բ. Ը. Մ. Կիպրոսի մասնաճյուղի հրատարակություն, Ե։

15. Արշալույս, շաբաթաթերթ, Թավրիզ. 1919 (1918-ին ձեռագիր է եղել)։

16. Արշալույս, ամսագիր, Ռսթամպուլ, 1931, N 1—7։

17. Բաներ, պարբերաթերթ, Երուսաղեմ, 1942, N 1—4։

18. Բարձունք, միամսյա հանդես, Հալեպ, 1957, Ա տարի, Հ. Բ. Ը. Մ., Նաճարյան-Կյուլպենկյան կենտ. վարժ. ուսանողների հրատ., խմբագրությամբ՝ Հայկ Պարիկյանի։ Ե տարվան համարը՝ 178 էջ, նվիրված է Մեսրոպ Մաշտոցին։

19. Բժիշկ, բժշկա-առողջապահական ամսագիր, Պեյրութ, 1957, Գ տարի, խմբ. կազմ., 64 էջ։

20. Գիտակից. պարբերական, Կ. Պոլիս, 1909, թիվ 1—2։

21. Գոյամարտ, շաբաթաթերթ, Բաղդաս, 1948—1952։

22. Դալարիք, տեղեկատու Աղեքսանդրիոյ Ազգային վարժարանաց, պատկերազարդ ամսագիր, պրակ Ա. 1939. թ. 1. տպգ. Ա. Գասապյան, 16 էջ։

23. Դիվան հայ մշակույթի. Սթանպուլ. 1945, հատ. Ա, պրակ 1—2։

24. Եգիպտահայ տարեցույց. Աղեքսանդրիա, 1912, տպ. Արամ Ստեփանյան։

---

2 Այս տեսակետից էլ Գ. Լևոնյանը ավելի հիշտ մոտեցում է ունեցել. դրանք ներկայացված են որպես մեկ պարբերական։

3 Գ. Լևոնյանի գործում, հայ պարբերական մամուլը ըստ հրատարակության վայրերի բաժնում, Եգիպտոսում (էջ 118) հիշատակված է նաև Փեքակ. պարբերական, Սեփոն 1919։ Այդպիսի վայր գոյություն չունի Եգիպտոսում և ոչ էլ այդ թվականներին այդ անունով թերթ։ լույս տեսել։ Դա պարզապես, Աղեքսանդրիայում 1903 թ. լույս տեսած Սեփոն Թյուֆենճյանի Փեքակն է։

25. Եգիպտահայ օրացույց, տարեցույց, Գահիրե, տպ. Զարեհ Պերպերյան, 1916, 190 էջ, փոքրագիր։

26. Ոսկեմայա յրատու, Ամերիկայի հայ Ավետարանական ընկերության, Նյու-Յորք, 1924—26։

27. Երիտասարդ Հայաստան, բացառիկ, ի նպաստ ինքնապաշտպանության, Բոստոն, 1914, Ա հատոր։ Նաև՝ բացառիկներ՝ նվիրված Զեյթունին և Սասունին։

28. Երկիր, ազգային շաբաթաթերթ, Աթենք, 1957—1964, արտոնատեր Ա. Պետրոսյան։

29. Զարթոնք, գրական, գիտական և քաղաքական շաբաթաթերթ, Ալեքսանդրեթ, 1924, Ա տարի, 18 և 28 էջ, հայերեն—ֆրանսերեն։

30. Զարթոնք, տարեգիրք, Կ. Պոլիս, 1932—1933։

31. Զենիթ, հանրագիտական շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1896—1908։

32. Զվարթապատում, երգիծաբանական տարեցույց, Պոստոն, 1924, Ա տարի, խմբ. Լեզու Ննորշալի։

33. Էջեր հայ գրականութենեն, պարբերագիրք, Ա, Բ, Դ հատ., Գահիրե, հրատ. Հայ գրքի բարեկամներու ընկերակցության, 1943, տպ. Նեղոս (Լույս է տեսել պրակ-պրակ՝ գրական արձագանքներով)։

34. Ընդհանուր տեղեկագիր, հայ կարմիր խաչի վարչության, 1915—1917-ի, Կահիրե, տպ. Սոկրատ և ընկ., 1917, 56 էջ։ Նաև նույնի՝ վեցամյա տեղեկագիր, տպ. Զ. Պերպերյան, 1925։

35. Թորգոմյան պատկերազարդ տարեգիրք, 1917, քսաներորդ տարի, աշխ. Մակար Չմշկյան, Թիֆլիս, տպ. Ռոտինյանց, 1916, 72 էջ։

36. Իտեալ, հուշատետր, պարբերական, Նիկոսիա, 1948, Ա տարի, հրատ. Լևոն Քաջբերունի։

37. Լաստ, գրական պարբերագիրք, Պեյրութ, 1953—1961 թթ., հրատ. Մ. Նաճարյան։

38. Լիոնահայ ուղեցույց-տարեցույց, պատկերազարդ և քարտեզներով։ Լիոն •1931, Ա տարի, հրատ. Ս. Փողհարյան, տպ. Եփրատ։

39. Լրաբեր, բացառիկ, 1946, Նյու-Յորք, նվիրված Սովետական Հայաստանի 25-ամյակին, հրատ. Ամերիկահայ հառաջադիմական միության։

40. Լրատու, Մերձավոր Արևելքի հայ Ավետարանակ. եկեղեցվո, Բեյրութ, 1939, Ա տարի։

41. Լույս, գրական-գեղարվեստական առարնտեսության նորույթի հարցերու և աշխարհիկ իրերու կանանց հատուկ շաբաթաթերթ. խմբ. Հայկանուշ Մարք, ապա՝ Արամ Անտոնյան, 24 էջ, Կ. Պոլիս, 1907—8, թ. 27—50, որպես շարունակություն «Ծաղիկի»։

42. Լույսի ժառանգ, պարբերական, Անթիլիաս, 1951, ապրիլ։

43. Լույս Փարիզի, շաբաթաթերթ, գրական, գիտական և հասարակական, Փարիզ, 1957, խմբ. Պ. Ելեկյան և Ավ. Ալեքսանյան։

44. Լուսաբեր, պաշտոնական օրգան Սեբաստիո հայրենակցական միության կենտր. վարչության, Նյու-Յորք, 1935—46։

45. Լուսավորիչ, շաբաթաթերթ, ս. Գր. Լուսավորիչ Հայաստանյաց եկեղեցվո, Նյու-Յորք, 1955—62։

46. Լուսարձակ Փարիզի, պարբերաթերթ, Փարիզ, 1951—52։

47. Խելոք Դավիթին (կամ Պոչով Աստղիկը) տարեցույցը, Կ. Պոլիս, 1919։

48. Ծաղիկ, երկօրյա ծաղր թերթ, Կ. Պոլիս, 1905—19[illegible], 1—9 և 10—113, խմբ. Գր. Թորոսյան և Երվ. Օտյան։

49. Ծաղիկ, ազգային, քաղաքական, տնտեսական, գրական և գիտական օրաթերթ, Կ. Պոլիս, 1899—1900, խմբ. Ղ. Բոլատ։

50. Ծաղիկ, պատկերազարդ շաբաթաթերթ տղոց և պատանիների, հատուկ. խմբ. Հակոբ Տեր-Հակոբյան, Կ. Պոլիս, 1907—1908, 1—26, տպ. Սուգայան, 16 էջ։

51. Ծաղկյալ Հայաստան, ալպոմ, Պեյրութ, 1946, օրգան Ս. Հայաստանի բարեկամներու ընկերության, նվիրված Ս. Հայաստանի 25-ամյակին։

52. Ծիրանի գոտի, եռամսյա հանդես, արվեստի և գրականության, հրատ. խմբ. Հ. Ավետիսյան, Բոստոն, 1957—1963։

53. Ծովակ, պարբերաթերթ, Մարսել, 1925—1930։ Նախ խմորատիպ, ապա տպագիր։ Հրատ. Ծոփք հայրենակցական միության, տպ. Երեցյան։

54. Կիլիկիա, պարբերաթերթ, Նյու-Յորք, 1917—1919, հայերեն և հայատառ տաճկերեն։

55. Կիկո, երգիծական շաբաթաթերթ, Դիտրոյթ, Ա տարի, 1927, թիվ 1—12։

56. Հազար ու մեկ գիտելիքներ, պարբերական ժողովածու, Գահիրե, 1938—39, հրատ. Հ. Գոնսուլյան, Ա հատ., 1—10, Բ հատ., 11—17։

57. Համազգային տարեգիրք, 1936, 1937 և 1938 տարիների, հրատ. Համազգային ընկերության, Գահիրե, 1936, Ա տարի, կազմ. Գ. Մխիթարյան, էջ 351, տպ. Սահակա-Մեսրոպ։

58. Համազգային օրացույց-տարեցույց, Բեյրութ, հրատ. համազգ. ընկ., խմբ. Գ. Իփեկյան, տպ. Հույս, 1939, 360 էջ, 1940, 368 էջ։ Նաև հաջորդ տարիներին։

59. Հայ լրաբեր, ազատական անկախ շաբաթաթերթ, Լոս-Անճելոս, 1932—1933, անգլ. և հայ. լեզուներով։

60. Հայ կարմիր խաչ. եռամսյա պարբերական, ազգային և գրական բաժիններով։ Բոստոն, 1939, Ա տարի։

61. Հայ պատանի. պարբերաթերթ, Բեյրութ, 1933—1935։

62. Հայ սիրտ. պարբերաթերթ, ՀՕՄ-ի, Բոստոն, 1956 (նախապես կոչվել է «Հայ օգնության միություն», 1940—47)։

63. Հայ սիրտ. գրական, դիտական և հասարակական պարբերաթերթ, Կ. Պոլիս, 1919, տպ. Գ. Ռիհանյան, օրկան պոլսահայ ազատականների։

64. Հայ տարեգիրք Տիգրոյթի և շրջակայքի, 1930—31, Ա տարի, էջ 240, հրատ. Դ. Ավագյան և Ա. Դալֆայան, Դետրոյիթ, տպ. Շինարար, 1930։

65. Հայ Ցավ. Ատանա, 1919, խմբ. Ս. Կեպենլյան, հայատառ-Թրքերեն։

66. Հայաստան, պարբերական, Դրեզնո-Լոս-Անճելոս, 1930, հայ-անգլ. լեզվով։

67. Հայաստան (Hayastan). Նոր սերունդ միության ամսաթերթ, Փարիզ, 1947—1952։

68. Հայելի. պատկերազարդ երգիծական շաբաթաթերթ, Տրոյ (ԱՄՆ), 1918, թ. 1։

69. Հայկուշեն, Վարուցան գրականության և մշակույթի, Փարիզ, խմբ. Շ. Միսաքյան, 1938։

70. Հայկարան. պարբերագիրք (պատկերազարդ ժողովածու հայագիտական նյութերու), Մեսրոպյան Ճեմարանի, Բավլովա, Սոֆիա, 1931, հրատ. Գեորգ Մեսրոպ, տպ. Պ. Պալլադեան, 324 էջ։

71. Հայրենաշեն, փարիզահայ ամսագիր. Փարիզ, 1935, 8 էջ (խմբ. Արմ. Կոթիկյան և ուրիշներ)։

72. Հայրենիք. տարեգիրք, Պոստոն, 1943—1947։

73 Հայրենի երկիր. տարեգիրք, Պ. Այրես, 1948։

74. Հանրագիտական սլաղոմ. Կ. Պոլիս, 1908, 18—19, կաղանգչեքի կիրակնօրյա թիվ։

75. Հառաջ, գրական, շաբաթաթերթ, Բեյրութ, 1963, է տարի, ապրիլ թ. («Մեր նշանաբանն է հառաջ» շաբաթաթերթի ամսօրյա հավելված)։

76. Հարվածային, գիրք գրականության և արվեստի, Բեյրութ, 1954, հոմիս, 70 էջ։

77. Հոս-Հոս, շաբաթաթերթ, Բեյրութ, 1928, Ա տարի (կա նաև նույնի տարեգիրքը)։

78. Ճեմ-Ակի, Պեյրութ, 1938, Ա տարի, պարբերաթերթ, հայ Ճեմարանի աշակերտության, տպ. Հույս, փոքրադիր, 16 էջ, թիվ 1—5։

79. Մայիսակ, պարբերաթերթ, Կահիրե, տպ. Դարբինյան, 1897, հայատառ-տաճկերեն։

80. Մանկական աշխարհ, շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1946, Բ տարի, հրատ. Վարժապետյան և Գարագաշյան, 12 էջ, հավելված «Ժամանակի»։

81. Մասիս, մանկավարժական հանդես, Կ. Պոլիս, 1894, № 1—11, հրատ. Ազգ. կենտրոնական վարչության խորհրդի վերահսկողությամբ։

82. Մասիս, կրոնական շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1896, հրատ. Արմաշի վանուց միաբանության։

83. Մարզիկ. մարզական ամսաթերթ, Կահիրե, խմբ. Դր. Դրլբեյան, 1951, №№ 1—12։

84. Մարմարա, տասնհինգօրյա գրական, Իսթանպուլ, 1955, 1—22, մեծածավալ. կազմողներ՝ Վ. Աճեմյան, Զահրատ և ուրիշներ։

85. Մեղուկ, երգիծաբանական թերթ, Գահիրե, 1917, խմբ. Ս. Սարաֆյան։

86. Միջնարերդ. գրական տարեգիրք Բեյրութ, կազմ. Սնապյան, 1957 և 1959 թթ.։

87. Միտք ու Մկան. Կահիրե, 1926—29, ամսաթերթ Պերպերյան վարժարանի երեց կարգերու, չապիկր տպագիր, էջերը խմորատիպ։

88. Միություն. ազգային, քաղաքական և ընկերային շաբաթաթերթ, Հայֆա-Երուսաղեմ, 1945—1947։

89. Նարեկ. կիսամսյա թերթիկ՝ սրբոց Նահատակաց հայ եկեղեցվո, Նյու-Յորք, 1954—1960, խմբ. Վարդան քհն. Մկրյան, փոքրածավալ. հայերեն-անգլերեն խառը։

90. Ներգաղթ. պարբերաթերթ, Նյու-Յորք. 1933, հրատ. Ներգաղթի Ամերիկայի հանձնախմբի կենտրոնական գործ. մարմնի։

91. Նոր ամերիկացի. պարբերաթերթ Դետրոյիտ, 1935, թիվ 1—5, անգլ. և հայերեն լեզվով։

92. Նոր Այգ. շաբաթաթերթ, Թեհրան, 1952, Ե տարի։

93. Նոր աշխարհ, պարբերագիրք գրականության և արվեստի, Բեյրութ, 1951, խմբ. Հ. Նորաշխարհյան, 24 էջ։

94. Նոր Խիկար. երգիծաթերթ, Կահիրե, խմբ. Գ. Կարինյան (Հայկ Ժամկուչյան), 1949, լույս է տեսել 2 համար, փոքրածավալ, 24 էջ։

95. Նոր կյանք, ազգային, գրական և քաղաքական շաբաթաթերթ, Մարսեյլ, հրատ. Եղիշե Թորոսյան, տպ. Ջավեն, 1947, Դ տարի, 1 էջ։ Օրգան հայ ազգային ճակատի։

96. Նոր կյանք. հանդես ազգագրական, Կ. Պոլիս, 1898—1902։

97. Նոր կյանք, Պեյրութ, 1957—1962. կինոնորությունների ամսագիր։

98. Նոր Միտք. պարբերաթերթ, Ասպարեզ երիտասարդներու, Նյու-Յորք, 1926, Ա տարի։

99. Նոր սինեմա. պարբերաթերթ, Պեյրութ, հրատ. գրական շրջանի, 1957—59։

100. Նորոգումն Հայաստանեայց Եկեղեցւո. կրոնական կիսամսաթերթ. Ֆիլադելֆիա, 1947։

101. Շողակաթ. ամսաթերթ ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւո, Պասադինա (ԱՄՆ), 1956—1960։

102. «Պահակի» բացառիկ. ազգային, գրական և քաղաքական, Բոստոն, տպ. Պահակի, 1921, մեծածավալ, 200 էջ։

103. Պատգամաբեր, ամսաթերթ հայ կաթոլիկե առաջնորդարանի, Աթենք, 1947—1952։

104. Պրիսմակ. անկախ շաբաթաթերթ, Պեյրութ, 1951, Ա տարի, Պարսումյան եղբայրք։

105. Ջահակիր. Բեյրութ, 1958, 8-րդ տարի, Հանդես Փայանճյան ճեմարանի լսարանական միության, խմբ. Ա. Տեր-Հակոբյան, տպ. Աշակ։

106. Ջահակիր, վեցամսյա գրական հանդես, Կահիրե, տպ. Ոսկետառ, 110 էջ, խմբ. Վ. Գևորգյան, 1914 (2 թիվ միայն)։

107. Ռազմիկ. պաշտոնաթերթ հայ կամավորներու միության, Փարիզ, 1934—43։

108. Ս. Հակոբ. ամսաթերթ հայ կաթոլիկներու, իբրև տեղեկատու, Կ. Պոլիս, 1956—1957։

109. Սուրիական տարեգիրք. Պեյրութ, տպ. Ազդակ, կազմ. Հ. Պալյան, 1929, Ա տարի, 316 էջ։

110. Վասպուրական. ամսաթերթ, Բոստոն, 1940—41, օրգան ամերիկահայ Վասպուրական միության։

111. Վարագ. Ն. Յորքի (Նյու-Յորք) 1953—60, 32 էջ, եռամսյա պարբերական, համավասպուրական հայրենակցական միության։

112. Վերապրիլ (Revivre), ֆրանսահայ գրական-գեղարվեստական և գիտական պարբերաթերթ, Փարիզ, Ա տարի, 1954, հունվար, թիվ 1, հիմնադիր-տնօրեն Ալպեռ Աշճյան, 32 էջ, երկսյունյակ, հայերեն-ֆրանսերեն։

113. «Վերածնունդի» բացառիկ համար նվիրված Ս. Հայաստանի 32-րդ տարեդարձին, 44 մեծադիր էջ, պատկերազարդ, Թեհրան, 1952, խմբ. Հայկ Գարագաշ։

114. Վերելք. ամսաթերթ, հայ քրիստ. երիտասարդի, Մարսել, 1947, Ա տարի, թիվ 1—10 և շար. մինչև 1951 թ.։

115. Վերելք. պարբերաթերթ. Պեյրութ, 1947—1956, հայերեն-ֆրանսերեն։

116. Վերելք. առաջադիմական թերթ, Թավրիզ, 1952—1953։

117. Վտակ. ամերիկահայ տարեցույց, Բոստոն, տպ. «Հայրենիք», կազմ. Եղիշե քհն. Գասպարյան, 1935, Ա տարի, 127 էջ։

118. Տարեգիրք Դիտրոյիթի. հրատ. Քղիի հայրենակցական միության, 1937, Ա տարի, 193 էջ։

119. Տարեկան ձեռնարկ, Ամերիկահայ առաջնորդարանի, Նյու-Յորք, 1948, Ը տարի, 100 էջ, Առաջնորդարանի օժանդակ միության միամյա հանդես, նվիրված հայ մշակույթին, խմբ. Տիրան եպս.։

120. Տարեկան տեղեկագիր, Հայկ. բարեգ. ընդհ. Միության, Աղեքսանդրիա, տպ. Սամատյան, 1919, 200 էջ։

121. Տարեկան տեղեկագիր, Փարիզի աղքատախնամ ընկերության, 36-րդ տարեշրջան, 1926, հունվ. 1 մինչև դեկտ. 31, Փարիզ, 1927, հայերեն-ֆրանսերեն։

122. Տարեցույց, բժշկական-առողջապահական, Կ. Պոլիս, կազմ. Վահան Ղազարյան, 1914, Ա տարի, 436 էջ։

123. Տարեցույց, 1885 թ. Քրս-ի, Կ. Պոլիս, 1885, 180 էջ, խմբ. ուսումնական խորհրդի, տպ. Մյուհենտիսյան։

124. Տարոնի արծիվ. օրգան Տարոնական ոգիին, հրտ. Տարոն-Տուրուբերանի հայրենակց. միության, պատ. խմբ. Ն. Աստվածատրյան, խմբ. Հայկ Ասատրյան, Սոֆիա, 1938, Ա տարի, թիվ 1—6, տպ. Ս. Պալըքճյան, 64 էջ։

125. Տարոնի արծիվ. օրգան Տարոնական ոգիին, հրատարակություն Տարոն-Տուրուբերանի հայրենակց. միության, Դետրոյիտ, Նյու-Յորք, 1949, Թ տարի։

126. Տեղեկաբեր Երուսաղեմի հայ մշակութային միության, պրակ. Ա և Բ, Երուսաղեմ, 1942։

127. Տեղեկագիր (ինամսյա), հայ որբախնամ ընկերության Գահիրեի հատվածին գործդ. ժողովին, 1918—1919, Գահիրե, տպ. «Փարոս»։

128. Տեղեկագիր. Ազգ.-Կրթական որբանոցի, Կիպրոս, Նիկոսիա, տպ. Ազգ. կրթարանի, 1901—1902, 36 էջ (նույնը եղել է նաև՝ 1897—98 թթ., 23 էջ, Գահիրե, տպ. Ս. Դարբինյան, իսկ 1899—1900՝ Գ. Դպիրյան, տպ. Վիեննա, 1900)։

129. Տեղեկագիր, գավառական վարչության քաղաք. ժողովի, առ պատկ. ընդհ. ժողովի հայոց Կահիրեի, 1921, 79 էջ, Կահիրե, հրատ. Կահ., հ. առաջն.։

130. Տեղեկագիր Թիֆլիսի Վանուց ավագ եկեղեցու կրոնապատմական թանգարանի մնայուն հանձնաժողովի, Թիֆլիս, տպ. Աղանյան, 1907—1908, էջ 58, 1908—1910, 1911—1912։

131. Տեղեկագիր հայ ընթերցատան, Զմյուռնիա, 1895, 25-րդ տարեշրջանի, 56 էջ։

132. Տեղեկագիր, Հայ Ս. գրքի ուսանողական ընկերության Հալեպի, Հալեպ, 1930։

133. Տեղեկագիր և Հաշվեկշիռ, Հայ թոքախտավորներու հիվանդանոցի, Մամլթեյն. 1928—1929, Զ տարի, Պեյրութ, 1930։

134. Տեղեկագիր Կահիրեի հայուհյաց բնակութեան 1919—1920, Կահիրե, տպ. Ոսկետառ։

135. Տեղեկագիր, Ազգանվեր հայուհյաց բնակութեան Եգիպտոսի մասնաճյուղին, 1909—1910, Աղեքսանդրիա։

136. Տեղեկագիր, Եգիպտահայ նպաստամատույց մարմնի, Կահիրե, ս.պ. Ոստան, 60 էջ։

137. Տեղեկագիր, Հալեպի հայ դաղթականաց ինամակալության, Հալեպ, 1930։

138. Տեղեկագիր, Հայկական աղքատախնամ բնակութեան, Կահիրե, 1933, տպ. Հ. Բաղդասար, հայերեն-ֆրանսերեն, նաև՝ 1918—1919 և 1920, տպ. Փարոս։

139. Տեղեկատու, ամսաթերթ, հրատարակություն Գահիրեի Հ. Բ. Ը. Մ., Գահիրե, տպ. Արգոս, 1962, Զ տարի, 16 էջ։ խմբ. կազմ. (Հ. Ժամկոչյան, Ս. Շալճյան և Գր. Պասմաճյան)։

140. Տեղեկատու, պրակ, հրատ. եգիպտահայ ներդաղթողներու միության, Կահիրե, թիվ 1, 1947։

141. Տեղեկատվություն, հայ ազգ. խորհրդի Աղեքսանդրիո 1946 թվի, Աղեքսանդրիա, 1946։

142. Տոմար Ընտանեկան, տարեգիրք, Թիֆլիս, հրատ. Երիցյան Ս., տպ. փոխարքային, 1874, 220 էջ։

143. Ուղեցույց Մարսելի, պարբերական հրատարակություն, Մարսել, հրատ. Հ. Վարժապետյան, տպ. Երիցյան, հատ. 1, 1928, 96 էջ, հատ. 2, 1934, 72 էջ, հատ 3, 1935, 80 էջ։

144. Ուսումնարան, Տարեգիրք Հելիպոլսո Մխիթարյան վարժարանի 1957 թվի, Կահիրե, տպ. «Հուսարեր», 1956, 138 էջ (նաև 1958, 1959—60 և 1961 թթ.)։

145. Տիգրիս, ազգային գրական, հասարակական կիսաշաբաթաթերթ, Բաղդատ, 1923, Բ տարի, խմբ. հրատ. Դուրգեն Փափազյան։

146. Փսսաբեմբո, Երգիծական շաբաթաթերթ, Աթենք, 1936, Ա տարի, թիվ 1—28։

147. Փարոս, երգիծական շաբաթաթերթ, Բեյրութ, 1951—1952։

148. Փարոս Հայաստանյաց, Ֆրեզնո, 1927—35, ամսաթերթ հայ եկեղեց. միության (սկզբում «Փարոս» անունով)։

149. Փնջիկ, պարբերաթերթ, Կ. Պոլիս, 1864—1866, հավելված «Փունջ» լրագրի։

150. Քնար, պատկերազարդ իզմիրյան արձագանք, Իզմիր, 1914, Ա տարի։

Բեյրութում 1961 թ. կազմակերպվել էր հայ պարբերական մամուլի ցուցահանդես, որտեղ ցուցադրվել են մոտ 1000 անուն հայ պարբերականներ, տրամադրված առանձին անհատների և հիմնարկների կողմից։ Այդ առիթով Արտ. Տեր-Խաչատրյանը հրատարակել է մի ցուցակ[4], որտեղ, դժբախտաբար, չի նշված հիշատակվածների ոչ հրատարակության տարեթիվը և ոչ իսկ հրատարակության վայրը։ Անկախ ցուցակի մեջ նշմարված սխալներից, արժե հիշել մի քանի պարբերականներ, որոնք նոր են մեզ համար, իսկ ոմանք էլ շատ հետաքրքիր իրենց կրած անուններով։

Սիրիայում.—Առաքյալը, Ավարայր. Զարուսահր, Կավրոյ՝ (Պապոյ, Լիլա, Նյ. 29, Հուտի շաբաթ, Մաղիկներ), Հայկազն, Հյուսիսայիր, Ուսում, Պարման, Վահագն, Տարոնի Արծիվ, Քրիստոնյա գործավոր պարբերականները և Արևելք, Դամասկահայ, Սասուն, Տիգրիս տարեգրքերը։

Լիբանանում.— Ազդարար, օրաթերթ, Արարատ Մարզական, Բանվորական միություն, Իշամեղու, Խարույկ, Հրանիգ, Մեր կյանքը, Նախամայր, Սինն-վնգ, Հայգայուս պարբերականները և Ոսկեգետիկ, Սիփան տարեգրքերը։

Հյուսիս. և Հարավ. Ամերիկայում.—Ամրոց, Արարատ, Նոանդ, Զարրոնք, Կայծ, Նոր Այնթապ, Նոր Խարբերտ, Զայն Ազատության, Մայր եկեղեցի, Տաճար, Նորոգումն Հայաստանյաց եկեղեցվոյ պարբերականները և Վերելք տարեգիրքը։

Մեր կողմից ավելացնենք, որ Դետրոյտում լույս է տեսել նաև Դատավոր շաբաթաթերթը, Անկախ Ազդարար ամսաթերթը, Երեք լեզվյան հայ բանվորական ամսաթերթը, որոնց հրատարակության տարեթիվը հայտնի չէ մեզ։

Թուրքիայում.—Կավե առձան, Քամի, Ալյակ, Գնակ, Ալաֆ և այլ պարբերականներ։

Ֆրանսիայում.—Հայ կամավոր, Տարազիր, Ազգ պարբերականներ։

Պաղեստինում.—Փառանգավոր, Հայ Մաուր պարբերականները։

Կիպրոսում.—Գրասեր պարբերականը և Կիսարտայիք տարեգիրքը։

Դ. ՇԱՀԼԱՄՅԱՆ

---

4 Հայ մամուլի ցուցահանդես (1794—1961), Բեյրութ, տպ. Ատլաս, 20 էջ, հրատ. հայ. ավետ. Քոլեջի շրջանավարտից մրության, 1961։